

Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2012 թվականի սեպտեմբերի 19-ի
N370L որոշմամբ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում..	4
2. Սակագնային քաղաքականություն.....	11
3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ	15
4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ	18
5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ.....	21
6. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	22

Նախաբան

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) էներգետիկայի, հեռահաղորդակցության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային համակարգում (գործունեության թույլտվությունների տրամադրման և սակագների սահմանման մասով) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
 - տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
 - ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Էներգետիկայի բնագավառում մատակարար-սպառող հարաբերություններում առաջացած խնդիրների կարգավորման և սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով 2012 թվականին մի շարք փոփոխությունների են ենթարկվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները:

2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով սահմանված՝ սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների տևողության նոր ցուցանիշները, համաձայն որոնց քաղաքային համայնքներում արտապլանային որևէ ընդհատման տևողություն չպետք է գերազանցի 4 ժամը՝ նախկին 8 ժամի փոխարեն, իսկ գյուղական համայնքներում 8 ժամը՝ նախկին 16 ժամի փոխարեն: Կրճատվել է նաև պլանային ընդհատումների տևողությունը, և այն այժմ չպետք է գերազանցի 6 ժամը՝ նախկին 8 ժամի փոխարեն: Բացի այդ, կիրառության մեջ է դրվել տարեկան պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևողության ցուցանիշը, որը քաղաքային համայնքների սպառողների համար գումարային առումով չպետք է գերազանցի 24 ժամը և 72 ժամը՝ գյուղական համայնքների սպառողների համար: Հանձնաժողովը, կարևորելով այս ցուցանիշների պահպանումը, հերթական առաջընթաց քայլն է կատարել 2012 թվականին՝ ներդնելով պատասխանատվության նոր գործիք մատակարարի կողմից սահմանված ցուցանիշների խախտման դեպքերի համար: Այն կգործի 2013 թվականի հունվարի 1-ից, և մատակարարը էլեկտրամատակարարման ընդհատումների վերականգնման վերը նշված ժամերի, դիմումներին և բողոքներին պատասխանելու համար սահմանված ժամկետների, ինչպես նաև սպառողների իրավունքներին առնչվող մատակարարման կանոններով ամրագրված մի շարք այլ ընթացակարգերի խախտման յուրաքանչյուր դեպքի համար սպառողին կվճարի տույժ՝ վերջինիս ծախսած էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի 20%-ի չափով (բայց ոչ ավելի, քան 2000 դրամը): Հաշվարկված տույժը կնվազեցվի սպառողին նախորդ ամսում ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման ենթակա գումարից՝ այդ մասին հատուկ նշում կատարելով վճարման

փաստաթղթում: Հարկ է նշել, որ տույժի վճարման գործընթացը մատակարարի կողմից կիրականացվի ավտոմատ եղանակով՝ առանց սպառողի կողմից որևէ դիմում կամ փաստաթուղթ ներկայացնելու պահանջի: Պատասխանատվության այս գործիքը հիմնականում կիրառվում է զարգացած երկրներում, իսկ ԱՊՀ երկրների շարքում մատակարարների նկատմամբ նման պահանջներ դեռևս սահմանված չեն:

Ներկայումս մշակման փուլում է գտնվում նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում համանման փոփոխություններ կատարելուն ուղղված փաստաթղթերի փաթեթը: Այս մոդելի վերջնական ներդրումը բնական գազի ոլորտում նախատեսվում է ավարտել 2013 թվականին: Բացի այդ, բնական գազի ոլորտում սկսվել են նաև աշխատանքները մատակարար-սպառող պայմանագրերի լրամշակման ուղղությամբ: Նպատակը մատակարար-սպառող հարաբերություններում արդյունավետ կարգավորման նոր հավասարակշռող մեխանիզմների ներդրումն ու սպառողների արդիական խնդիրներին լուծումներ առաջադրելն է: 2013 թվականին նախատեսվում է նաև ավարտել բնական գազի բաշխման ցանցին միացման գործող իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները, որն ավելի մատչելի կդարձնի նոր սպառողների միացումը բնական գազի բաշխման ցանցին:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է նաև էլեկտրական ցանցին նոր սպառողների միացման գործընթացը: Վերջինս էական փոփոխությունների է ենթարկվել նաև ընթացիկ տարում. ևս մեկ անգամ փոքր և միջին բիզնեսի համար կրճատվել են միացման ժամկետները, մշակվել և ընդունվել է էլեկտրոնային դիմումների ներկայացման նոր կարգ: Այն կգործի 2013 թվականի հունվարի 1-ից և հնարավորություն կընձեռի էլեկտրական ցանցին միանալու ցանկություն ունեցող բոլոր անձանց փաստաթղթեր ներկայացնել դրանք ընկերության վեբ կայք ներբեռնելու միջոցով:

Փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչներին, ինչպես նաև բնակչությանն աջակցելու նպատակով հանձնաժողովը նվազեցրել է ինդուկցիոն հաշվիչները էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներով փոխարինելու համար սահմանված կանխավճարի չափերը: Ընթացիկ տարվա ապրիլի 1-ից միաֆազ ինդուկցիոն հաշվիչները բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու համար սահմանված 20000 դրամ կանխավճարի չափը նվազեցվել է 10000 դրամի, իսկ եռաֆազ ինդուկցիոն հաշվիչները բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու համար սահմանված 120000 դրամ կանխավճարի չափը՝ 50000 դրամի: Բացի այդ, հանձնաժողովն արդեն իսկ ընդունել է որոշում, համաձայն որի 2013 թվականի հունվարի 1-ից եռաֆազ ինդուկցիոն հաշվիչները բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու համար սահմանված 50000 դրամ կանխավճարի չափը կնվազեցվի 35000 դրամի: Նշենք, որ էլեկտրոնային հաշվիչների տեղադրումը հնարավորություն է տալիս

սպառողներին օգտվելու գիշերային զեղչ սակագներից, որոնք շուրջ 30%-ով ցածր են սովորական սակագներից: Այս համատեքստում հարկ է նշել, որ հանձնաժողովը փոփոխություն է կատարել նաև գիշերային զեղչ սակագների կիրառման ժամերում, համաձայն որի յուրաքանչյուր տարվա մարտ ամսվա վերջին կիրակի օրվա ժամը 02:00-ից մինչև հոկտեմբեր ամսվա վերջին կիրակի օրվա ժամը 03:00-ն ընկած ժամանակահատվածում գիշերային զեղչ սակագները գործում են 22:00-ից մինչև 6:00-ն, իսկ մնացած ժամանակահատվածում՝ ժամը 23:00-ից մինչև 07:00-ն:

Հստակեցվել են նաև առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, նորոգման և շահագործման ծախսերին առնչվող հարցերում մատակարար-սպառող հարաբերությունները: Սահմանվել է, որ անկախ պատկանելությունից, առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, շահագործման (ներառյալ՝ սպասարկման, ստուգաչափման, նորոգման ու պահպանման) և փոխարինման ծախսերն ու պատասխանատվությունը կրում է մատակարարը: Բացի այդ, հստակեցվել է պատասխանատվությունը սպառողներին սնող էլեկտրատեղա-կայանքների շահագործման հարցում: Սահմանվել է, որ սպառողների էլեկտրամա-տակարարման նպատակով օգտագործվող էլեկտրատեղակայանքների ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, նորոգման և պահպանման) ծախսերն ու պատասխանատվությունը՝ կրկին անկախ դրանց պատկա-նելությունից, կրում է մատակարարը՝

- բազմաբնակարան շենքի բնակիչների դեպքում՝ մինչև սպառողի բնակարանը,
- 0,22 կՎ լարմամբ սնվող մնացած սպառողների դեպքում՝ մինչև սպառողի շենքի, շինության կամ տարածքի կանգնակը կամ բաշխիչ վահանը,
- 0,4 կՎ և բարձր լարմամբ սնվող սպառողների դեպքում՝ մինչև էլեկտրա-էներգիայի առք ու վաճառքի պայմանագրով ամրագրված սահմանազատման կետը (էլեկտրատեղակայանքների հաշվեկշռային պատկանելության սահման):

Սահմանվել են նաև վերը նշված հարաբերությունները կարգավորող այլ առանձնահատկություններ՝ կողմերի միջև հնարավոր վեճերից խուսափելու նպատակով:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այլ օրակարգային խնդիրներ, որոնք մշտապես բարձրացվում են առանձին սպառողների կամ նրանց շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների կողմից, 2013 թվականին հանձնաժողովը կշարունակի էներգետիկայի բանագավառի իրավական դաշտի կատարելագործման աշխատանքները՝ մատակարար-սպառող հարաբերություններում ծագող վեճերը և տարաձայնությունները արդյունավետ կարգավորելու նոր հավասարակշռող մեխանիզմներ ներդնելու նպատակով:

2012 թվականին, հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի

կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ աշխատանքներ են տարվել բնագավառում արդար և բաց մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են.

- ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգում կատարված փոփոխությունները՝ հստակեցվել է էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններում օգտագործվող սարքավորումների ցանկը, որոնց օգտագործման համար թույլտվություն չի պահանջվում,
- «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված լիցենզիայի պայմաններում կատարված լրացումը, համաձայն որի ընկերությունը պարտավոր է մինչև 2015 թվականի սեպտեմբերի 3-ը արդիականացնել Հայաստանի Հանրապետության մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերը՝ հնարավորություն ընձեռելով այդ հեռախոսագծերով ստանալու լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ,
- հատուկ ծառայությունների կամ ծառայության կողերի զբաղեցման կանոնների ընդունումը, որով կանոնակարգվել է իրավասու մարմինների կողմից վերոհիշյալ կողերի օգտագործումը արտակարգ իրավիճակներում մարդու կյանքի, առողջության, գույքի կամ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների դեպքում օպերատիվ արձագանքման գործառույթներ իրականացնելիս,
- տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման սակագների և պայմանների հրապարակման կարգում կատարած փոփոխությունը, որի համաձայն հստակեցված են տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող շարժական կապի օպերատորների կողմից բաժանորդներին առաջարկվող պայմանները: Այսուհետ տվյալների հոսքի արագության միջակայքը սահմանելիս օպերատորները պետք է հաշվի առնեն արագության վրա ազդող գործոնները և արագության վերին և ստորին սահմանները ամրագրելիս ներկայացնեն այն սկնկավորող միջակայքը, որը հասանելի կլինի բաժանորդին,
- միջազգային ռուսմիկ ծառայություններն առավել թափանցիկ և կանխատեսելի դարձնելու նպատակով, առաջ անցնելով ռուսմիկ ծառայության մատուցման համաշխարհային զարգացումներից, շարժական կապի բջջային օպերատորների կողմից հաջողությամբ կիրառվում է SMS հաղորդագրության

միջոցով սովյալ երկրի տարածքում գործող միջազգային ռուսմինգ ծառայության սակագների մասին տեղեկացնելու պրակտիկան: Պետք է նշել, որ վերոհիշյալ ծառայության ներդրման անհրաժեշտության մասին բջջային կապի GSM ստացիացիայի կողմից աշխարհի խոշոր օպերատորներին միայն 2012 թվականին է առաջարկվել:

Հեռահաղորդակցության ոլորտի ազատականացումից հետո, հանձնաժողովի կողմից ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու, ինչպես նաև տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու կարգավորման քաղաքականության արդյունքում 2012 թվականի դրությամբ.

- Երևան քաղաքում ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը հասցվել է 100%-ի, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 83 %-ի,
- հանրապետությունում գործում են բջջային կապի փոխադարձ ներթափանցման ծածկույթ ունեցող 3G տեխնոլոգիայի վրա հիմնված երեք ցանցեր, որոնք 2013 թվականի ընթացքում կշարունակեն ընդլայնվել,
- Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում գործում են 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցեր: 2013 թվականի ընթացքում նախատեսվում է դրանց ընդլայնումը նաև այլ բնակավայրերում,
- Երևան քաղաքում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: 2013 թվականին այդ ցանցերի ներդրմանն ուղղված աննախադեպ, լայնամասշտաբ աշխատանքներ կիրականացվեն հանրապետության մարզերում,
- տարատեսակ տեխնոլոգիաների վրա հիմնված ցանցերի ընդլայնման և մրցակցության զարգացման արդյունքում աճել են միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերը՝ 2011 թվականի վերջին արձանագրված 26 Գբիթ/վ-ի փոխարեն 2012 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ արձանագրվել է 31 Գբիթ/վ, ինչն էլ իր հերթին նպաստել է այդ ծառայության սակագների նվազմանը,
- «ԱՅՓԻ» տարանցման շուկայում գրանցվել է սակագնի կայուն նվազում և 2011 թվականի 24000 դրամի դիմաց 2012 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ այն կազմել է 15 000 դրամ՝ նվազել է 37,5%-ով,
- ինտերնետ ծառայությունների բաժանորդների քանակը՝ ներառյալ GPRS տեխնոլոգիայով մատուցվող ծառայությունները, 2012 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ կազմել է 1 869 491, իսկ լայնաշերտ ինտերնետ ծառայությունների բաժանորդների քանակն առանց GPRS և 3G տեխնոլոգիաների օգտագործման՝ մոտ 409 000:

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, 2013 թվականին հանձնաժողովը շարունակելու է աշխատանքներ տանել բնագավառում արդար և բաց մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության մեծացման և մատչելիության ապահովման ուղղությամբ:

2013 թվականին շարունակվելու է ամրակցված հեռախոսային ցանցերի թվայնացման գործընթացը հանրապետության ողջ տարածքում: Նախատեսում է նաև ավարտել հանրային ամրակցված հեռախոսացանցի բաժանորդային գծերի համատեղ օգտագործման կանոնակարգի մշակման աշխատանքները: Այդ կանոնակարգը հնարավորություն կտա լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների շուկայում կիրառել մրցակցության ապահովման էական և գործուն միջոց: Այն կնպաստի հեռահաղորդակցության շուկայում այլընտրանքային օպերատորների գործունեության ծավալմանը՝ հնարավորություն ընձեռելով նրանց օգտագործելու գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորի հանրային ամրակցված հեռախոսացանցի վերջին մղոնը կազմող ենթակառուցվածքները (բաժանորդային գծերը)՝ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցելու նպատակով:

2013 թվականին հանձնաժողովը հետևելու է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերը արդիականացնելու գործընթացին՝ հնարավորություն ընձեռելով այդ հեռախոսագծերով ստանալ լայնաշերտ ինտերնետային ծառայություններ:

2013 թվականին հանձնաժողովն առանձնակի ուշադրություն կդարձնի մարզերի համաչափ զարգացմանը՝ հատկապես հանրապետության փոքր և հեռավոր բնակավայրերում բջջային կապի և ինտերնետ ծառայությունների մատուցման հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով: Այս կապակցությամբ խնդիր է դրվելու բջջային կապի օպերատորների առջև՝ Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերում և միջպետական նշանակության ավտոճանապարհների ամբողջ երկայնքով ապահովել ձայնային և շարժական լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցումը, ինչպես նաև ավելացնել գործառնական գրասենյակների և սպասարկման կետերի քանակը:

2013 թվականին հանրապետությունում կամբողջականացվեն շարժական բջջային կապի ցանցերում համարների տեղափոխելիության ծառայության ներդրմանն ուղղված աշխատանքները:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ծառայություններ մատուցող օպերատորների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման նպատակով, 2013 թվականին հանձնաժողովը նախատեսում է, որ

գործունեության հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը իրենց վեբ կայքերում հրապարակեն ոչ միայն շարժական բջջային կապի երեք օպերատորները, այլև հեռահաղորդակցության շուկայում հիմնական գործունեություն ծավալող մյուս օպերատորները:

2013 թվականին նախատեսվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ համագործակցության շրջանակում ուսումնասիրություն իրականացնել՝ ուղղված էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում հանձնաժողովի կարողությունների ու կառուցվածքի բարելավմանը, ինչպես նաև հայաստանյան միջավայրում ԵՄ անդամ պետություններում ընդունված կարգավորիչ օրենսդրության և պրակտիկայի ինտեգրմանը:

2013 թվականին նախատեսվում է վերոհիշյալ բանկի հետ համագործակցությամբ անդրադառնալ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ենթակառուցվածքների հասանելիության ապահովմանը վերաբերող կանոնակարգերի մշակմանը, որոնք նախատեսվում է իրականացնել հետևյալ ուղղություններով.

- մեծածախ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ապահովում,
- բաժանորդային գծերի տարանջատված հասանելիության ապահովում, ինչը օպերատորներին հնարավորություն կտա անհրաժեշտության դեպքում օգտագործել որևէ այլ օպերատորի պատկանող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի բաժանորդային գծերի մի մասը,
- պասիվ ենթակառուցվածքների հասանելիության ապահովում, որի դեպքում առավել օպտիմալ և նպատակային կօգտագործվեն գոյություն ունեցող ենթակառուցվածքները:

Նախատեսվում է, հիմնվելով 2012 թվականին հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների դասակարգման և շուկաների սահմանման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վրա, ՎՋԵԲ-ի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ համագործակցությամբ մշակել նաև էլեկտրոնային հաղորդակցության շուկայի սահմանման և դասակարգման, ինչպես նաև մրցակցության երաշխավորման կանոններ, որից հետո կվերլուծվեն շուկաներն ըստ առաջնահերթությունների:

2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Հիմք ընդունելով 2012 թվականի էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, 2012 թվականի պետական բյուջեում ամրագրված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը, 2011 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2012 թվականի ապրիլի 1-ից վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, ինչպես նաև «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման հաստատագրված ամսական վճարները:

էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու և միաժամանակ 2012 թվականի ապրիլի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճ թույլ չտալու նպատակով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող լրացուցիչ ֆինանսական ձեռքավածքը փակվել է «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների հաշվարկներում ներառված շահույթի և մաշվածության ծախսային հոդվածների նվազեցման հաշվին:

Հաշվի առնելով նշված գործոնների վերլուծությունը՝ էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վերանայում կիրականացվի նաև 2013 թվականի առաջին եռամսյակում:

Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 1-ը, հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, սահմանված կարգով կձգարտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները:

Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Էլեկտրաէներգետիկական համակարգում ռիսկերի հավասարակշռման և նրա կառուցվածքային փոփոխությունները մեթոդիկայում արտացոլելու անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվում է լրամշակել և նոր խմբագրությամբ հաստատել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկան:

Յուրաքանչյուր տարի՝ մինչև տարեվերջ, ուսումնասիրվում և հաստատվում են երկդրույք սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

2012 թվականի փետրվար ամսին վարձակալության 7-րդ պայմանագրային տարվա համար սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով էր դիմել «Երևան Զուր» ՓԲԸ-ն՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաձի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները բազիսային սակագներում հաշվի առնելու համար: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ինչպես նաև 2011թ. մանրածախ ջրամատակարարման ծավալների և այլ եկամուտների ուսումնասիրության և վերլուծության արդյունքներից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 174.059 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը գրեթե հավասար է նախորդ տարվա համար հաշվարկված սակագնին: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

Ելնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաձի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և «Երևան Զուր» ՓԲԸ-ին մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների 2012 թվականի փաստացի գնահատականներից, 2013 թվականին նույնպես կճշգրտվեն ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման բազիսային սակագները:

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման գործընթացը կանոնակարգելու նպատակով ներկայումս մշակվում է և կհաստատվի «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարի հաշվարկման մեթոդիկան:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով, նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2013 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունները:

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող **ֆինանսական հաշվետվությունների** վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրված է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նշված ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում ընդգրկված են ֆունկցիոնալ տարբեր բնույթի գործունեություն իրականացնող ընկերություններ, նախատեսվում է առաջիկայում մշակել և կարգավորվող ընկերություններում ներդնել հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների անհատական համակարգեր: Նշված աշխատանքները հանձնաժողովին հնարավորություն կտան կարգավորվող յուրաքանչյուր ընկերությունից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել կարգավորվող ոլորտներում ընկերությունների կազմակերպարարական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

Ներկայումս գազամատակարարման համակարգի ընկերությունների համար մշակվում են հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, որոնք նախատեսվում է ներդնել 2013 թվականի հունվարի 1-ից: Այս գործընթացի ավարտից հետո, հաշվառման նոր համակարգից բխող սկզբունքներով և առանձնահատկություններով պայմանավորված՝ կփոփոխվեն նաև ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Ֆինանսատնտեսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, ֆինանսական վերլուծության նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2013 թվականին: Մասնավորապես, հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլանները գազամատակարարման համակարգի ընկերություններում ներդնելուց հետո, նախատեսվում է 2013 թվականին դրանք մշակելու և էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերություններում ներդնելու ուղղությամբ:

2013 թվականի ընթացքում կարգավորվող ընկերությունները կներկայացնեն հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կկատարվի նրանց ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ

Լիցենզավորման գործառույթն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարող ընկերությունների նկատմամբ:

2012 թվականի հունվարի 1-ից մինչ սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում էներգետիկայի բնագավառում տրամադրվել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 6, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանի կառուցման՝ 1 և փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 18 լիցենզիա: Միաժամանակ, երկարաձգվել են նախկինում տրամադրված 22 լիցենզիաների, իսկ ջրային համակարգում՝ ջրային համակարգի օգտագործման 2 թույլտվությունների գործողության ժամկետները: Նույն ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման՝ 7 և ծայնային ծառայությունների մատուցման 3 լիցենզիա:

Կարգավորվող բնագավառներում (համակարգերում) գործունեության լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման գործընթացը կշարունակվի նաև 2013 թվականին:

Հանձնաժողովը վերջին տարիներին ընդունել է նաև մի շարք որոշումներ, որոնցով առավել հստակեցվել և պարզեցվել է էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործընթացը, էականորեն կրճատվել է էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գրեթե բոլոր գործունեության տեսակների համար պահանջվող փաստաթղթերի ցանկը: 2013 թվականի ընթացքում հանձնաժողովը շարունակելու է հետամուտ լինել գործարար միջավայրի բարելավման որդեգրած քաղաքականությանը՝ հստակեցնելով և պարզեցնելով էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման լիցենզավորման գործընթացը:

Հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների

գործողության ժամկետում չգործարկելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: Ակնկալվում է, որ 2012 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարները կկազմեն շուրջ 6 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 5,3 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների՝ 2013 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 6,2 մլրդ դրամ:

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից **լիցենզիաների պայմանների պահպանման** և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին՝ ինչպես ընկերություններից պահանջվող հաշվետվությունների, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով:

Այդ նպատակով հանձնաժողովը 2012 թվականին լրամշակել է էներգետիկայի բանագավառի և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվությունների ձևերը, ինչպես նաև ներդրել է դրանք էլեկտրոնային ձևաչափով ներկայացնելու նոր կարգ: Տեղեկատվությունների լրամշակված ձևերը հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ ուսումնասիրություններ իրականացնել սահմանված սպասարկման որակի ցուցանիշների պահպանման հարցում և հնարավորինս նվազեցնել ուսումնասիրությունների նպատակով ընկերություններ կատարվող այցելությունների քանակը:

2012 թվականին ուսումնասիրվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը որոշ դեպքերում չի պահպանել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման ժամկետները, ինչը խոչընդոտել է այդ անձանց ծրագրավորած գործարար ձեռնարկների ժամանակին մեկնարկումը կամ բնակարանների էլեկտրամատակարարումը: Նշված խախտումների համար ընկերությունը ենթարկվել է ֆինանսական պատասխանատվության (տուգանքի)՝ 10 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Հայրուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը, ինչպես նաև վերջիններիս գնումների կարգերին առաջադրված լրացուցիչ պահանջների պահանջմանը: Ընկերությունների կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով դրանց

մասին ողջ տեղեկատվությունը ներկայումս հրապարակվում է ինչպես գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես էլ վերջիններիս վեբ կայքերում: 2013 թվականին հանձնաժողովը կշարունակի ուսումնասիրել նշված ընկերությունների գնումների գործընթացը և անհարժեշտության դեպքում կկիրառի դրանց թափանցիկության բարձրացման նոր մեխանիզմներ:

Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակում հետևողական քայլեր է ձեռնարկում նաև ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի ուղղությամբ: 2012 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրնուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Լոռի-ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից հրապարակված գրաֆիկների ու փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Մասնավորապես, 2012 թվականի ընթացքում հանձնաժողովը հանրապետության 27 քաղաքային և 16 գյուղական համայնքների հետ աշխատանքներ է իրականացրել փաստացի ջրամատակարարման վիճակը պարզելու նպատակով և ի հայտ եկած շեղումների դեպքում ջրամատակարար ընկերություններին տվել է դրանք շտկելու վերաբերյալ հանձնարարականներ: Ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տվել նաև համակողմանիորեն գնահատել ընկերությունների կողմից մատուցվող ջրամատակարարման ծառայու-թյունների որակը և քայլեր մշակել դրանց հետագա բարելավման ուղղությամբ:

2013 թվականին կշարունակվեն կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների ու թույլտվությունների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքի ուսումնասիրությունները և պատասխանատվության միջոցների կիրառումը՝ իրենց պարտականություններում թերացող ընկերությունների նկատմամբ: Ուսումնասիրություններ կիրականացնեն նաև հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց մոտ՝ պարզելու վերջիններիս գործունեության համապատասխանությունը հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջներին:

4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ

Հանձնաժողովի գործառնություններից առանձնանում է նաև էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, ինչպես նաև ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հաջորդ երեք տարիների ներդրումային ծրագրին, ինչպես նաև ամփոփում է ընկերության նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները՝ հաշվի առնելով նաև հանրապետության մարզերի և Երևան քաղաքի սպասարկման որակի փաստացի ցուցանիշների մեծությունները: Հանձնաժողովը մշտապես ջանքեր է գործադրում սպառողների հոսանքագրկումների քանակի և տևողության, ինչպես նաև սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշները բարելավելու նպատակով: Այդ ցուցանիշները պարբերաբար գնահատվում են հանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի համար, ինչը թույլ է տալիս ներդրումներն առաջնահերթ նպատակաուղղել առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը: Հարկ է նշել, որ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում: Այստեղ հրապարակվում են նաև ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքները:

2013 թվականին հանձնաժողովը կքննարկի և համաձայնություն կտա նաև «Հայրուսգագարդ» ՓԲԸ-ի հաջորդ երեք տարիների ներդրումային ծրագրին, ինչպես նաև կամփոփի ընկերության նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները:

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները: Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Հաշվի առնելով

նաև, որ սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներկայացվում են նաև հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը, սպառողներն իրենք ևս հսկողություն իրականացնելու հնարավորություն ունեն մատակարարների կողմից հայտարարված ջրամատակարարման գրաֆիկների պահպանման նկատմամբ: 2013 թվականին հանձնաժողովը կվերանայի նշված հինգ ընկերությունների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները, ինչպես նաև կսահմանի այդ ցուցանիշների 2014 թվականի ծրագրային մեծությունները: Բացի այդ, հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում հրապարակել սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ նշված ընկերությունների հաշվետվությունների ուսումնասիրությունների արդյունքները:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին:

2012 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են 133 փոքր հիդրոէլեկտրակայաններ, և 70-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 210 ՄՎտ և դրանք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 674 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է 156 ՄՎտ, և սպասվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 548 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 203 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 366 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2012 թվականին՝ մինչև սեպտեմբերի 1-ը, լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար հանձնաժողովը կայացրել է 17 ընկերությունների ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ:

2013 թվականին կծեռնարկվեն անհրաժեշտ բոլոր քայլերը այս բնագավառի զարգացումը խթանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, իսկ իրենց

պարտավորությունները պատշաճ կերպով չկատարող ընկերությունների նկատմամբ կշարունակվեն կիրառվել համապատասխան տույժեր:

5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ

Ջանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը 2013 թվականին ևս միտված կլինի հանձնաժողովի ընթացիկ գործունեությունն ու ռազմավարությունը ԶԼՄ-ների միջոցով պատշաճ լուսաբանելու և հանրությանն ընկալելի ներկայացնելու խնդիրն: Շարունակելով զարգացնել թափանցիկ և հրապարակային աշխատանքը, հանձնաժողովը կփորձի առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով գալիք տարվա համար ծրագրվում է առավել ակտիվ և նախաձեռնող մարտավարություն: Հանձնաժողովի դիտակետում կլինի հանրության հետ հետադարձ կապի ապահովման խնդիրը, սահմանված կարգով և ժամկետներում պատասխաններ կտրվեն բարձրացված գրավոր և բանավոր հարցերին, լրատվամիջոցների համար պարբերաբար կթողարկվեն համառոտ ծանուցումներ, կտրվեն մամլո հաղորդագրություններ, հանձնաժողովի նիստերի մասին ամփոփիչ տեղեկանքներ: Հանձնաժողովի գործունեության և հանրային ընկալման առումով հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին պաշտոնական տեղեկատվությունները կհրապարակվեն մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներով: Ինչպես նախորդ տարիներին, 2013 թվականին նույնպես տեղեկատվության տարածումն ընդգրկելու է հանրապետության ողջ տարածքը: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույց-ներով:

Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը. հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանրության կարծիքն ու գնահատականը:

2012 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովում ստացվել է 108 գրավոր բողոք, իսկ «Հրատապ հեռախոսով» և քաղաքացիների ընդունելության արդյունքում՝ 367, որոնցում բարձրացված բոլոր հարցերին տրվել են համապատասխան ընթացք և պարզաբանում: Քայլեր են ձեռնարկվում սպառողների բարձրացրած հարցերին պատշաճ ընթացք տալու և դրանց լուծման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Խնդրի կարևորման փաստով է պայմանավորված հանձնաժողովի սերտ համագործակցությունը սպառողների շահերը պաշտպանող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց

դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները:

Այդ նույն կարգավիճակով նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստերին: Երկուստեք ընդունելի այս ավանդույթը շարունակություն կունենա նաև առաջիկա տարիներին:

Հետահայաց գնահատելով նախորդ տարիների փորձը, հանձնաժողովը 2013 թվականին ևս անհրաժեշտ քայլեր կձեռնարկի սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ուղղությամբ:

6. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Ջարգացման և առաջընթացի միջազգային փորձն ուսումնասիրելու և կիրառելու նպատակով հանձնաժողովը կշարունակի ակտիվ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Հեռահաղորդակցության միջազգային միության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ:

2013 թվականին նախատեսվում է հանձնաժողովի մասնագետների գործուն մասնակցությունը էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

Բացի այդ, ԱՄՆ-ի կարգավորողների ընկերակցության և Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Այովա նահանգի կարգավորող մարմնի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև 2010 թվականի հունիս ամսին կնքված համագործակցության հուշագրի շրջանակում նախատեսվում է 2013 թվականին փոխայցելությունների միջոցով ուսումնասիրել երկու երկրների կարգավորման փորձը:

2012 թվականի թվականի ապրիլի 3-ին Ուկրաինայի կապի և տեղեկատվայնացման ոլորտում պետական կարգավորում իրականացնող ազգային հանձնաժողովի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև կնքվել է համագործակցության հուշագիր: Կնքված հուշագրի շրջանակում, կարևորելով պետություններից յուրաքանչյուրի տնտեսական զարգացման վրա հեռահաղորդակցության ոլորտի ազդեցությունը, շուկաների մասնակիցների և վերջնական օգտագործողների, ինչպես նաև սպառողների շահերը, փորձի փոխանակման նպատակով կկազմակերպվեն կարգավորող մամիների աշխատակազմերի մասնագետների փոխայցելություններ: